

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ օգնագործման ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆՎՈՐ ՓՈՒՆԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Արարատի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիների համար՝

NN Ը/Կ	ԵՐԹՈՒՂՈՒ				սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը /ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը/
	Անվանումը և համարը	սկզբնակետը /ավտոկայան/	վերջնակետը /ավտոկայան/	տեսակը /ավտոբուս միկրոավտոբուս/	
1	02-031 Բ. Արարատ-գ. Արարատ	Բ. Արարատ	գ. Արարատ	միկրոավտոբուս	2

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

- Հայտ.
- Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր /գրանցման վկայագրեր/.
- Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
- Ավտոբուսի վարձակալման դեպքում վարձակալության պայմանագիր.
- Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու /կահավորելու/ դեպքում շահագործման և վերասարքավորման օրինակառությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսի վարորդի սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում օրինակառությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակազմի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայական գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
- Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի /թե սահմանված է/ փոխադրման գինը, իսկ միջնարգային և ներմարագային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Ելված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 11 մայիսի 2017թ., ժ 11-ին, ք.Արտաշատ, Օգոստոսի 23 N156, „Արտաշատի ԲՈՒՍ„ ՄՊԸ Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը -Արարատի մարզպետարան, սենյակ N 507, ամեն օր՝ ժամը 10-ից -17-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), վերջին ժամկետը-03 մայիսի 2017թ., ժամը՝ 17 00-ն:

Հեռախոսահամար՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար-0235/2-15-02
Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001թ օգոստոսի 16-ի N762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝  Գ. Մարտյան

